ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանի՝ Տաջիկստանի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Դուշանբե, Տաջիկստանի Հանրապետություն, 2018 թվականի հոկտեմբերի 3-5-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավարի պարտականությունները կատարող Ռ.Վ. Դավիդով:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 68-րդ նիստին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 68-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 11 որոշումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում տեղի է ունեցել երկկողմ հանդիպում Տաջիկստանի Հանրապետության մաքսային ծառայության ղեկավար Կարիմզոդա Խուրշեդ Աբդուրախմոնի հետ, որի ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 68-րդ նիստի ընթացքում ստորագրվել են թվով 11 որոշումներ, մասնավորապես բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության ծրագրերով ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների համար կադրեր պատրաստելու մասին համաձայնագրի նախագծի վերաբերյալ, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի և ռեսուրսների տեղեկատվական անվտանգությանն առաջադրվող տիպային պահանջների նախագծի վերաբերյալ, երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունների և մաքսային հսկողության իրականացման ժամանակ ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային մարմինների և երկաթուղային փոխադրողների փոխգործակցության տիպային տեխնոլոգիայի նախագծի վերաբերյալ և այլն:

Նիստի ընթացքում Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավար Վ.Ի. Բուլավինը 1 տարի ժամկետով վերընտրվեց որպես ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Որոշում է կայացվել ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի հաջորդ՝ 69-րդ նիստը անցկացնել Ղրղզստանում 2019 թվականի հունիսին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Հարգանքով՝

10/10/2018

X

VERIFIED OCSP 10/10/2018 10:51:04 GMT+4

Signed by: NERSISYAN SHUSHANIK 5308860769 ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

09.10.2018թ.